

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն (ԵԱՀԿ)

Քաղաքացիական գործողություններ հանուն անվտանգության և շրջակա միջավայրի (ՔԳԱՇՄ)

Փոքր դրամաշնորհների ծրագիր

Ծրագրերի հայեցակարգային փաստաթղթերի ներկայացման
հայտարարություն

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ) «Շրջակա միջավայր և անվտանգություն» նախաձեռնության շրջանակներում հայտարարում է Հայաստանում Քաղաքացիական գործողություններ հանուն անվտանգության և շրջակա միջավայրի (ՔԳԱՇՄ) Փոքր դրամաշնորհների ծրագրի հաջորդ փուլը, նպատակ ունենալով աջակցելու քաղաքացիական հասարակության այն նախաձեռնություններին, որոնք անդրադառնում են շրջակա միջավայրի և անվտանգության խնդիրներին:

ԵԱՀԿ Երևանյան գրասենյակը առաջարկում է քաղաքացիական հասարակության կազմակերպություններին (ՔՀԿ) ներկայացնել ծրագրերի հայեցակարգային փաստաթղթերը ՔԳԱՇՄ Փոքր դրամաշնորհների ծրագրի ներքո, համաձայն ՔԳԱՇՄ վերաբերյալ հայտարարությանը (հասանելի է <http://www.osce.org/yerevan> և www.aarhus.am կայքերում):

ՔԳԱՇՄ տրամադրում է դրամաշնորհներ քաղաքացիական հասարակության՝ **շրջակա միջավայրին և անվտանգությանը** վերաբերվող այն գործողությունների և ծրագրերի համար, որոնք անդրադառնում են հետևյալ մեկ կամ ավելի ոլորտներին.

Թեմատիկ ուղղություններ. բնական պաշարների կայուն կառավարում, պայքար հողի դեգրադացման դեմ, բնական և արհեստածին աղետներ, վնասակար թափոնների և թունաքիմիկատների կառավարում, էներգետիկա, կլիմայի փոփոխություն, հանքարդյունաբերություն, կայուն տրանսպորտային համակարգ և էկոկրթություն:

Համընդհանուր ուղղություններ. շրջակա միջավայրի ոլորտի կառավարում՝ բնապահպանական անվտանգությունը սոցիալական տեսանկյունից, կանանց դերը և մասնակցությունը, երիտասարդության դերը և մասնակցությունը:

Առաջնահերթությունը կտրվի այն գործողություններին կամ ծրագրերին, որոնք նպատակաուղղված են ՔՀԿ-ների կարողությունների զարգացմանը և խրախուսում են շրջակա միջավայրի և անվտանգության խնդիրներին վերաբերվող կապերի ընդլայնմանը ու տարբեր շահագրգիռ կողմերի միջև համագործակցությունը, ինչպես նաև այն ծրագրերը, որոնց բնույթը մոտ է Օրհուս կենտրոնների գործունեության հարթություններին:

Ծրագրին կարող են դիմել քաղաքացիական հասարակության կազմակերպություններ՝ հասարակական կամ համայնքային կազմակերպություններ և հիմնադրամներ, որոնք չեն ստանում որևէ ֆինանսավորում պետական բյուջեից, որոնք գրանցված են ու գործում են Հայաստանի Հանրապետությունում, ծավալում են ոչ կառավարական (հասարակական) գործունեություն և չունեն շահույթի հետապնդման կամ կավարչական իշխանություն ձեռք բերելու նպատակներ: Այլ իրավաբանական կարգավիճակ ունեցող հաստատությունները, այդ թվում. պետական մարմինները, պետական ոչ առևտրային կազմակերպությունները, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները և բաժնետիրական ընկերությունները իրավասու չեն մասնակցելու:

Դիմումների ներկայացման վերջնաժամկետ՝
Դրամաշնորհների չափը՝
Ծրագրի առավելագույն ժամկետը՝

ապրիլի 29, 2013թ.
մինչև 8000 եվրո
մինչև 6 ամիս

Խնդրում ենք անգլերեն լեզվով կազմված ծրագրերի հայեցակարգային փաստաթուղթը փակ և կնքված ծրարի մեջ ներկայացնել ԵԱՀԿ երևանյան գրասենյակ Տնտեսական և բնապահպանական ստորաբաժանում հետևյալ հասցեով՝ 0012, ք. Երևան, Սունդուկյան 64/1, հեռ. 010 229610, կամ էլեկտրոնային տարբերակով հետևյալ հասցեով. CASE-AM@osce.org: Խնդրում ենք ներկայացնել հավելվածներ 1-ում և 2-ում նշված բոլոր փաստաթղթերը: Թերի փաթեթները չեն դիտարկվելու:

ՔԳԱՇՄ Փոքր դրամաշնորհների ծրագրերի հայեցակարգային փաստաթղթի ձևաչափի, ՔԳԱՇՄ Փոքր դրամաշնորհների հայտարարության, ՔԳԱՇՄ Փոքր դրամաշնորհների ծրագրին դիմելու ուղեցույցի և այլ համապատասխան տեղեկատվության համար այցելեք <http://www.osce.org/yerevan> և www.aarhus.am կայքերը կամ դիմեք Yerevan-AM@osce.org էլեկտրոնային հասցեով, նամակը վերնագրելով «CASE Small Grants Programme»: